ՈՐՈՇՈՒՄ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 1910478909, 1910518246 որոշումներն անփոփոխ, իսկ գանգատն առանց բավարարման թողնելու մասին

<<30>> 12 2019թ. 17-4-11170 ք.Երևան

ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե. Կարապետյանս, վերանայելով քաղաքացի Գրիգոր Սուրենի Համբարձումյանի դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

Քաղաքացի Գրիգոր Սուրենի Համբարձումյանը ՄԴ/5808-19 դիմումով խնդրել է ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1910478909, 1910518246 որոշումները վերահասցեագրել իրեն:

Նյութերի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ թիվ 1910478909, 1910518246 որոշումների հիմքում դրված լուսանկարները փաստում են, որ դրանցով ամրագրված իրավախախտումները ակնհայտորեն չեն կատարվել Գրիգոր Սուրենի Համբարձումյանի կողմից, քանի որ որոշումներով ամրագրված իրավախախտումների հիմքում դրված լուսանկարներից ակնհայտ է, որ ավտոմոբիլը վարում է այլ անձ: Նշված փաստերի համադրումը հիմք է տալիս հաստատված համարել այն հանգամանքը, որ վերջինիս կողմից դիմում ներկայացնելը նպատակ է հետապնդում տրանսպորտային միջոցների սեփականատիրոջն ազատել վարչական պատասխանատվությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1910478909, 1910518246 որոշումները թողնել անփոփոխ, իսկ գանգատն՝ առանց բավարարման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Սույն որոշման օրինակներն ուղարկել Գրիգոր Սուրենի Համբարձումյանին (հասցեն՝ Արարատի մարզ, Արբաթ, 8 փ., տ. 4), Արման Ալեքսանդրի Մակարյանին (հասցեն՝ ք. Երևան, Ավան, Իսահակյան թղմ., շ. 2/2, բն. 28) և ՏՄՀԻՍ կենտրոն:

Ե. Կարապետյան

Կատարող Կ. Ղազարյան
Հեռ. 010 562974